պիսի հինաւուրց խաղողի վազեր կտեսնէք, որոնք մարդուս ոտքի հաստութեամբ են, ահագին հաստութեամբ և բարձրութեամբ ծառի արմատից սկսած մինչև կատարն են բարձրանում և փաթաթւում են բոլոր ճիւղերի վրայ։ Այսպիսի հինաւուրց խաղողի վազը առատ տարին տալիս է մի ահագին սայլ լիքը խաղող։ Բայց ողկոյզները խիտ տերևների տակ ծածկուած լինելու պատճառով ընդհանրապէս այս կողմերում խաղողը լաւ չի հասունանում և հետևաբար գինին լինում է թթու, թոյլ ու անգոյն։ Սակայն աշխատասէր Ուտիացին ոչ մի կաթիլ գինի չի ծախի իւր մառանում գետնի տակը թաղուած մի քանի տասնեակ լիքը կարասներից. այլ ձմեռնային ամիսներին՝ ուրախութեան, նշանադրութեան ու հարսանեաց և բարեկենդանի ժամանակ՝ Մուղանի անապատի և Կուր գետի ափերից որս բերած խոզի խորոված ի վրայից կխմէ իւր թթուաշ գինին և կուտեցնէ ու կխմցնէ իւր տան պատուական հիւրերին։ Ընդհանրապէս Ուտիացոց աշխարհի դաշտային բոլոր աշխատանքները կատարում են բացառապէս աղամարդիկ, իսկ անայինները՝ կանայքն ու հարսները և մատաղահաս աղջիկները։

Դ

ԿԱՆԱՆՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՎԻՃԱԿԸ

Տնային բոլոր աշխատանքները կատարում են բացառապէս կանայք։ Անա այդ աշխատանքները. կարել, ձևել, լուանալ, բուրդ գզել և մա-